



Press Release

Armenian Catholicosate, PO Box 70 317, Antelias – Lebanon Tel.: (+961-4) 523 461/2, 410 001/3, Fax: (+961-4) 419 724

E-mail: cathcil@cathcil.org Website: www.armenianorthodoxchurch.org

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՅԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ
2 0 0 8

Պ Ա Տ Գ Ա Մ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆԹԻԼԻԱՍ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
Թեմակալ Առաջնորդներուն,
Հոգեւոր Դասուն,
Ազգային Իշխանութեանց, եւ
մեր ժողովուրդի զաւակներուն,

2008 տարուան սեմին, Հայրապետական օրհնութեամբ եւ քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք ձեզ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն, մաղթելով աստուածային բարիքներով լեցուն հարուստ տարի մը:

Ինչպէս գիտէք, իւրաքանչիւր տարի, Հայրապետական Պատգամի ճամբով կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի զաւակներուն խորհրդածելու, անհատաբար թէ հաւաքաբար, եւ լուսարձակին տակ բերելու մեր ընդհանրական կեանքին հետ աղերս ունեցող հիմնահարցեր եւ առաջնահերթ մտահոգութիւններ:

Այս ծիրէն ներս, ձեր յատուկ ուշադրութեան յանձնած էինք *Աստուածաշունչի* (2003), *Ընտանիքի* (2004) եւ *Հայ Դպրոցի* (2006) կեդրոնական տեղը ու կենսական դերը մեր եկեղեցւոյ ու ազգի կեանքէն ներս: Արդարեւ, խօսելով այս սրբազան արժէքներուն ու կառոյցներուն մասին, շեշտած էինք քրիստոնէական դաստիարակութեան առանցքային կարեւորութիւնը հայ մարդու հոգեմտաւոր կազմաւորման եւ ընդհանրապէս մեր ժողովուրդի քրիստոնէական հաւատքի ամրապնդման մէջ:

Արդ, մեկնելով այս անհերքելի իրողութենէն, ինչպէս նաեւ նկատի ունենալով ներկայ աշխարհի պայմաններէն ու մարտահրաւերներէն յառաջացող լուրջ մտահոգութիւնները, որոշեցինք 2008 տարին հռչակել՝

« Ք Ր Ի Ս Տ Ո Ն Է Ա Կ Ա Ն Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ե Ա Ն Տ Ա Ր Ի »

Եկէք, նախ փորձենք հասկնալ, ամփոփ գիծերով, քրիստոնէական դաստիարակութեան իմաստը, անոր նպատակը ու անհրաժեշտութիւնը: Եւ ապա, մեզ շրջապատող իրականութիւններու լոյսին տակ տեսնենք թէ՛ ի՞նչ են մեր ժողովուրդի զաւակներուն կրօնական առողջ դաստիարակութիւն ջամբելու ազդու միջոցները:

Ա.

Ի՞նչ կը հասկնանք քրիստոնէական դաստիարակութիւն ըսելով

Ընդհանուր մօտեցումով կրօնական դաստիարակութիւն կը նշանակէ անհատի մը կամ համայնքի մը կեանքէն ներս ներարկել իր պատկանած կրօնին ճշմարտութիւնները ու սկզբունքները, արժէքները ու աւանդութիւնները, որոնք պէտք է շաղախուին տուեալ անհատի կամ համայնքի կենցաղակերպին, գործելակերպին ու մտածելակերպին հետ: Այլ խօսքով, կրօնական դաստիարակութեան նպատակն է կրօնը իր հաւատալիքներով ու ուսուցումներով, իր պատմութեամբ ու առաքելութեամբ ամբողջական, մնայուն ու կենդանի ներկայութիւն դարձնել անոր հետեւող անհատի մը կամ համայնքի մը կեանքէն ներս՝ հոգեմտաւոր զարգացման ու կազմաւորման ընթացքի մը ընդմէջէն:

Ընդհանուր գիծերով նոյնն է նաեւ նպատակը քրիստոնէական

դաստիարակութեան: Աւելի յստակօրէն ընդգծելով՝ քրիստոնէական դաստիարակութիւն կը նըշանակէ.-

ա) Քրիստոսի եկեղեցւոյ անդամ դառնալու կոչուած, կամ արդէն իսկ դարձած, անհատը կազմաւորել աստուածաշնչական ճշմարտութիւններով ու արժէքներով, որպէսզի ան կարենայ գիտակից հաւատքով ու ամբողջական նուիրումով հետեւիլ Քրիստոսի:

բ) Աստուածաշնչական ուսուցումներուն ու բարոյական սկզբունքներուն առընթեր, կրօնական դաստիարակութեան նպատակն է քրիստոնէայ մարդուն կամ համայնքին փոխանցել՝ ընդհանրապէս քրիստոնէական կրօնի պատմութեան եւ մասնաւորաբար իր պատկանած եկեղեցւոյ դաւանական կեցուածքներուն, աստուածաբանական մօտեցումներուն, ինչպէս նաեւ իր եկեղեցւոյ հայրերուն, սուրբերուն ու վկաներուն կեանքին ու գործին մասին հիմնական տեղեկութիւններ:

գ) Քրիստոնէութիւնը ուսուցումներու ամբողջութիւն մը չէ, ո՛չ ալ սոսկ հոգեւոր արժէքներու համակարգ մը: Քրիստոնէութիւնը կեանք է: Քրիստոս ըսաւ՝ *"Ես եկայ, որպէսզի առաւել կեանք ունենամ"* (Յովհ. 10.10): *"Առաւել կեանք"*ը մարդկային կեանքը ըմբռնելու, արժեւորելու ու ապրելու այնպիսի իւրայատուկ եղանակ է, ուր կը ճառագայթէ Քրիստոս իր աստուածային ճշմարտութիւններով ու յաւիտենական պատգամներով: Քրիստոնէական դաստիարակութեան նպատակն է ցոյց տալ դէպի *«առաւել կեանք»* տանող ճամբան:

դ) Ճշմարտօրէն քրիստոնէայ ըլլալը մարդու էութեան ու գոյութեան հետ ամբողջական նոյնացում է, որովհետեւ գիտակցօրէն հետեւիլ է Քրիստոսի (Մատթ. 16- 24) եւ Քրիստոսը զգենուլ է, ինչպէս կը բնորոշէ Առաքեալը (Յռոմ. 13.14): Յետեւաբար, լոկ գիտելիքներու փոխանցում մը չէ քրիստոնէական դաստիարակութիւնը. այլ՝ անհատի մը կամ համայնքի մը հոգեմտաւոր կերտումն է, Քրիստոսը ունենալով որպէս *"ճանապարհ, ճշմարտութեան եւ կեանք"* (Յովհ. 14.6): Ահա թէ ինչու քրիստոնէական դաստիարակութիւնը պէտք է իրագործել էապէս որպէս մասնակցութիւն Քրիստոսի խորհրդրդական մարմնոյն՝ եկեղեցւոյ առաքելութեան, հաւատքի վկայութեան:

Բ.

Քրիստոնէական դաստիարակութիւնը սիրտն է եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան

Մեկնելով քրիստոնէական դաստիարակութեան նըպատակէն եւ նկատի ունենալով անոր ունեցած եզակի կարեւորութիւնը, բոլոր եկեղեցիներու մօտ, հին դարերէն սկսեալ, քրիստոնէական դաստիարակութիւնը նըկատուած է եկեղեցւոյ առաքելութեան սիրտը: Աւետարանչութիւնը, քարոզչութիւնը, ընկերային ծառայութիւնը եւ եկեղեցւոյ առաքելութեան առընչուած այլ նախաձեռնութիւններ, անկասկած, հրամայական են քրիստոնէական հաւատքի տարածման համար:

Սակայն, այս բոլորին մեջ քրիստոնեայ մարդուն հոգեւոր ու բարոյական կազմաւորումը բացարձակ անհրաժեշտութիւն է, որպէս նախապայման եկեղեցւոյ հոգեւոր շինութեան: Եկեղեցին որպէս հաւատքի համայնք կազմուած է անհատներէ: Եկեղեցին կը դառնայ զօրեղ ու կենսունակ, հոգեւոր ու բարոյական իմաստով, երբ անոր անդամները կրօնական առողջ կազմաւորում ունին: Արդարեւ, մարդը արժէք է քրիստոնեական կրօնին համար: Քրիստոս իր երկրաւոր առաքելութեան ընթացքին մօտեցաւ հիւանդին թէ աղքատին, հարուստին թէ զըրկեալին, որովհետեւ ան եկած էր մարդը վերամարդացընելու՝ իր «աստուածային պատկեր»ին համաձայն: Արդ, եկեղեցւոյ համար անհատ մարդու գիտակից քրիստոնեացումը՝ իր հաւատքի ճշմարտութիւններուն եւ հոգեւոր ու բարոյական կեանքի սկզբունքներուն ամբողջական իւրացումով եղած է ու կը մնայ առաջնահերթ մտահոգութիւն:

Ներկայ ժամանակներուն, կրօնական դաստիարակութիւնը աւելի՛ շեշտակի կարեւորութիւն ստացած է եկեղեցիներու համար: Արդարեւ, համաշխարհայնացումի յառաջացուցած լուրջ վտանգները սկսած են սպառնալ քրիստոնէութեան ինքնութիւնը ու հիմքը կազմող հիմնական հաւատալիքներուն: Ներկայ աշխարհի մարդակեդրոն չափանիշները ու մարդանպատակ մօտեցումները սկսած են հարցականի տակ առնել Քրիստոսի հիմնած հոգեւոր թագաւորութեան սկզբունքները: Արդ, ներկայ աշխարհին մեջ երբ հոգեւոր թագաւորութիւնը Քրիստոսին ու նիւթեղէն թագաւորութիւնը մարդուն մնայուն բախումի մեջ են, Աւետարանի յաւիտենական ճշմարտութիւններով ու արժէքներով քրիստոնեայ մարդուն գինունը անյետաձգելի պարտաւորութիւնն է եկեղեցւոյ: Այս գիտակցութենէն մղուած ու նախանձախնդրութենէն թելադրուած, բոլոր եկեղեցիները հսկայ մարդուժ ու զումար կը տրամադրեն կրօնական դաստիարակութեան, մէկ կողմէն՝ պաշտպանելու իրենց հաւատացեալները մարդկային կեանքէն Աստուծոյ ներկայութիւնը հեռացնող վտանգներու դէմ, եւ միւս կողմէն՝ քրիստոնեական արժէքներով ու սկզբունքներով թրծելու նոր սերունդները:

Գ.

Չայ եկեղեցւոյ համար քրիստոնեական դաստիարակութիւնը հրամայական անհրաժեշտութիւն է

Չին դարերէն սկսեալ հայ եկեղեցին յատուկ ուշադրութիւն ընծայած է դաստիարակութեան: Արդարեւ, Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ճառերէն սկսեալ մինչեւ Թարգմանչաց սերունդի հոգեմտաւոր ստեղծագործութիւնները ու ապա Արծաթեայ Դարու մեր եկեղեցւոյ հայրերուն հոգեւոր գրականութիւնը, հայ եկեղեցւոյ հոգեւոր, բարոյական ու ընկերային ուսուցումներէն ու կանոններէն սկսեալ մինչեւ իր մարդասիրական, աւետարանչական ու դաստիարակչական լայնածաւալ գործունէութիւնը Չայաստանի, Կիլիկիոյ ու Սփիւռքի մեջ, պերճախօս կերպով կը վկայեն հայ մարդու հոգեւոր ու բարոյական դաստիարակութեան նկատմամբ մեր եկեղեցւոյ ցուցաբերած խոր մտահոգութեան ու բարձրագոյն աստիճանի հոգածութեան մասին:

Քրիստոնեական դաստիարակութիւնը հայ եկեղեցւոյ համար կը մնայ ու պէտք է մնայ առաջնահերթութիւն՝ իր հաւատքի առաքելութեան ծիրէն ներս: Այս ուղղութեամբ կարելոր կը նկատենք ընդգծել կարգ մը հիմնական կէտեր, որոնք իւրայատկութիւնը կը կազմեն հայ եկեղեցւոյ կեանքէն ներս կատարուող քրիստոնեական դաստիարակութեան.-

ա) Քրիստոնեական դաստիարակութիւնը պէտք չէ ըմբռնել ինքնակեդրոն ու ինքնանպատակ հայեցակէտով. անհրաժեշտ է գայն դիտել հայութիւն-քրիստոնէութիւն փոխ-յարաբերութեան շրջագծէն ներս եւ պատմական հարուստ փորձառութեան լոյսին տակ: Ծանօթ իրողութիւն է, որ հայ ժողովուրդին դարձը քրիստոնէութեան սովորական դէպք մը չէր: Քրիստոնեական հաւատքը ներթափանցեց հայ կեանքէն ներս, շաղուեցաւ հայ կեանքին հետ, նոյնացաւ հայ կեանքի ներքին դրուածքին, տազնապներուն ու ձգտումներուն հետ: Հայութեան ու քրիստոնէութեան այս ամբողջական ու անքակտելի միացումը պէտք է շեշտակիօրէն արտայատուի քրիստոնեական դաստիարակութեան մէջ: Արդարեւ, Քրիստոնեական դաստիարակութեան ու հայեցի դաստիարակութեան միջեւ բաժանման գիծեր գոյութիւն չեն կրնար ունենալ. անոնք պէտք է գիրար ամբողջացընեն, զօրացնեն ու հարստացնեն:

բ) Հայ ըլլալ մեզի համար կը նշանակէ քրիստոնեայ ըլլալ: Քրիստոնէութիւնը մարդակերտումի ու հայակերտումի առանցքը ու հէնքը կը կազմէ: Հայեցի դաստիարակութիւնը պէտք է կատարուի քրիստոնեական կրօնի իւրայատուկ ոգիին ու հաւատքին, մտածողութեան ու կեանքին, ոճին ու որակին ամբողջական ու գիտակից ընկալումով: Արդ, քրիստոնեական դաստիարակութիւնը կոչուած է առաջնորդը դառնալու հայեցի դաստիարակութեան: Վաւերական հայու կեանքին մէջ արեւու լոյսին նման պէտք է ճառագայթեն քրիստոնեական արժէքները ու ճշմարտութիւնները:

գ) Մեր եկեղեցւոյ համար կրօնական դաստիարակութիւնը չէ եղած ու պէտք չէ դառնայ երբեք սոսկ Աստուածաշունչի ուսուցում: Աստուածաշունչը քրիստոնեական առաքելութեան, ուսուցումներուն, ծէսին ու ընդհանրապէս քրիստոնեական կեանքին կեդրոնն է, անկասկած: Աստուածաշունչին հոգեւոր ու բարոյական սկզբունքները բոլոր ժամանակներուն ու բոլոր քրիստոնեայ ժողովուրդներուն համար, հիմնաքարը կը նկատուին քրիստոնեական դաստիարակութեան: Սակայն, Աստուածաշունչը իր ճշգրիտ, հարազատ ու լիիրաւ իմաստը ու արժէքը կը գտնէ եկեղեցւոյ համայնական կեանքէն ներս: Արդ, Սուրբ Գրային պատմութեան ու մեկնաբանութեան հարկ է միացնել դարերու վրայ տարածուած մեր եկեղեցւոյ հոգեմտաւոր ստեղծագործութիւնը, հաւատքի վկայութիւնը, եւ քրիստոնեական հաւատքի կենսագործման ու տարածման համար գործած ու ստեղծագործած եւ իրենց արիւնը թափած մեր հայրապետներուն, մեր սուրբերուն ու նահատակներուն վարքն ու գործը: Այլ խօսքով, քրիստոնեական դաստիարակութեան անհրաժեշտ է մօտենալ համապարփակ հայեցակէտով:

Դ.

Ինչպե՞ս կատարել քրիստոնեական դաստիարակությունը

Քրիստոնեական դաստիարակությունը, որ սերտորեն առնչուած է քրիստոնեայ անհատի ֆիզիքական, հոգեւոր, մտային ու բարոյական աճման ու կազմաւորման հետ, պէտք է կատարուի այնպիսի մօտեցումով ու եղանակով, որ քրիստոնեական հաւատքը կը վերածէ գոյութեանական իրականութեան եւ ո՛չ թէ տեսական յղացքի: Այս հեռանկարով անհրաժեշտ կը նկատենք հետեւեալ յիշեցումները կատարել.-

ա) Քրիստոնեական դաստիարակությունը եկեղեցւոյ առաքելութեան հիմքը կը կազմէ, եւ հետեւաբար, անոր գերագոյն պատասխանատուն եկեղեցին է: Քրիստոնեական դաստիարակութեան հետ աղերս ունեցող ռեւէ գործունէութիւն հարկ է որ տեղի ունենայ եկեղեցւոյ հովանիին ներքեւ: Եկեղեցին դուրս, եկեղեցւոյ իշխանութեան սահմաններէն անդին քրիստոնեական հաւատքի ուսուցման ռեւէ փորձ ընդունելի չէ: Երբեմն անհատներու կողմէ, անձնակեդրոն մօտեցումներով ու գրաւիչ ձեւերով կատարուող նման նախաձեռնութիւններ կըրնան հաւատացեալները ու մանաւանդ երիտասարդները առաջնորդել սխալ ուղղութեան: Հարկ է ըլլալ զգոյշ նման երեւոյթներու դիմաց:

բ) Քրիստոնեական դաստիարակութեան նպատակը մարդու հոգեմտաւոր կազմաւորումը ըլլալով, անհրաժեշտ է որ կարեւորութեամբ նկատուի մարդը շրջապատող ներկայ ժամանակներու մտահոգութիւններն ու մարտահրաւերները: Նոյնը կատարեց Քրիստոս: Իր տուած օրինակներուն ու պատմած առակներուն մէջ տիրական ներկայութիւն էին իր ժամանակի երեւոյթները ու հարցերը: Չենք կրնար անտեսել ներկայ աշխարհը: Քրիստոնէութիւնը ընկերութենէն հեռու, ինքնակեդրոն իրականութիւն մը չէ: Աստուծոյ Որդին աշխարհ եկաւ մարդկային կեանքը յեղաշրջելու ու վերանորոգելու: Քրիստոնեական դաստիարակությունը պէտք է կատարուի նոյն մօտեցումով՝ պատրաստելու համար այնպիսի քրիստոնեաներ, որոնք ամբողջական ճանաչումը ունենալով ներկայ աշխարհի չարիքներուն ու տագնապներուն, կարենան յանձնառու դառնալ ընկերութեան մարդակեդրոն արժէքներուն համակարգը շրջելու՝ համաձայն քրիստոնեական հաւատքի ճշմարտութիւններուն ու հրամայականներուն:

գ) Քրիստոնեական դաստիարակությունը պէտք է կատարուի հայ եկեղեցւոյ աւանդութիւններուն ու մեր կեանքին ներքին դրուածքին համաձայն: Մեր մշակոյթը ու լեզուն, մեր եկեղեցւոյ ծէսը ու կառոյցը, մեր ազգային ըմբռումներն ու համոզումները անհրաժեշտ է որ իրենց տեղը ունենան կրօնական դաստիարակութեան առնչուած աշխատանքներուն մէջ: Այս բոլորին կողքին, չենք կրնար անտեսել մեր անմիջական շրջապատը: Ցանկապատեր ու սահմաններ փաստօրէն գոյութիւն չունին այլեւս մեր շուրջ: Այս կացութիւնը մեզ կը մղէ մէկ կողմէ՝ ամբօրէն կառչած մնալու մեր իւրայատուկ տեսակետներուն ու աւանդական մօտեցումներուն, եւ միւս կողմէ՝ զգուշաւոր կերպով բացուելու մեր շրջապատին, անհրաժեշտութեան պարագային որդեգրելով այնպիսի ձեւեր ու միջոցներ, որոնք

չեն վտանգեր հայ եկեղեցւոյ ինքնութիւնը եւ իր կողմէ կատարուող քրիստոնէական դաստիարակութեան իւրայատկութիւնը: Բանականաբար դիւրին գործելակերպ մը չէ այս. սակայն ներկայ աշխարհի պարտադրանքին դիմաց հարկ է ցուցաբերել ճկուն ու հաւասարակշռուած մօտեցում, յատկապէս արեւմտեան երկիրներուն մէջ:

դ) Քրիստոնէական դաստիարակութիւնը անհրաժեշտօրէն կարիքը ունի այնպիսի միջոցներու, որոնք քրիստոնէական արժէքներու փոխանցումը կը դարձնեն հետաքրքրական, հեզասահ ու ազդու: Կարելի չէ անտեսել մարդուն անփոխարինելի դերը այս գործընթացին մէջ: Առաքելութիւն մը կ'իրագործուի հաւատք, յանձնառութիւն ու տեսիլք ունեցող մարդոց կողմէ: Մանաւանդ կրօնական դաստիարակութեան նման վեհ աշխատանք մը պէտք է կատարուի այնպիսի անձերու կողմէ, որոնք իրենց կեանքով ու գործով կենդանի օրինակ կը դառնան իրենց քարոզած ճշմարտութիւններուն: Դաստիարակին առընթեր, իւրաքանչիւր ժամանակ ունի դաստիարակութեան յատուկ իր միջոցները. եւ եկեղեցին յաջողած է լայնօրէն օգտագործել իր ժամանակաշրջանին ու միջավայրին ընձեռած կարելիութիւնները: Համաշխարհայնացած ներկայ աշխարհին մէջ լսողատեսողական միջոցներու ամբողջական ու ճիշդ օգտագործումը վստահաբար մեծապէս արդիւնաւէտ պիտի դարձնէ քրիստոնէական դաստիարակութեան գործը: Արդարեւ, արհեստագիտական միջոցներու գործածութիւնը դարձած է այլեւս բնական ու հրամայական ո՛չ միայն նոր սերունդին, այլ ընդհանրապէս բոլոր տարիքի մէջ գտնուող մեր եկեղեցւոյ զաւակներուն համար:

ե) Քրիստոնէական դաստիարակութիւնը մնայուն ընթացք մըն է, որ պէտք է կատարուի ծրագրուած ու հետեւողական կերպով եւ հանգրուանային զարգացումով: Այս գործընթացին մէջ եկեղեցւոյ կողքին կարելոր դեր ունին ընտանիքը ու դպրոցը: Հայ մանուկը իր աչքերը աշխարհին կը բանայ հայ ընտանիքէն ներս, ուր իր ֆիզիքական աճման կ'ընկերանայ իր հոգեւոր աճումը: Հետեւաբար, որքան վճռական է ծնողքին դերը քրիստոնէական դաստիարակութեան մէջ: Ահա թէ ինչու ընտանիքը նկատուած է «փոքր եկեղեցի»: Իսկ հայ դպրոցը քրիստոնէական դաստիարակութիւնը պէտք է նկատէ անբաժան ու անբաժանելի մասը մարդակերտումի ու հայակերտումի իր առաքելութեան: Մեր կրթական կառոյցներէն ներս, քրիստոնէական դաստիարակութիւնը պէտք չէ տրուի միայն կրօնի ուսուցումով, այլ նաեւ բարոյախօսութեան յատուկ պահերու ճամբով եւ այլ յարմար առիթներու օգտագործումով: Արդ, եկեղեցի, ընտանիք եւ դպրոց սերտ գործակցութիւնը կը նկատենք հրամայական:

Ե.

Քրիստոնէական դաստիարակութեան վերածրագրում

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը քրիստոնէական դաստիարակութիւնը կը նկատէ իր առաքելութեան ամենէն էական բնագաւառներէն մէկը: Այս յանձնառութենէն մեկնած, մեր Սուրբ Աթոռը անցնող տարիներուն ո՛չ միայն անհրաժեշտ մարդուժ եւ նիւթական ու գործնական լայն կարելիութիւններ

տրամադրած է այս յոյժ կարելու գործին, այլ նաեւ՝ հրատարակութիւններու, դասախօսութիւններու ու համագումարներու ճամբով լայն ծաւալ ու նոր մղում տուած է քրիստոնէական դաստիարակութեան աշխատանքներուն: Չմոռնանք, որ Կիրակնօրեայ վարժարաններուն հիմքը դրուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ, 1930 թուին, եւ շնորհիւ Մեր նախորդ Յայրապետներուն հետեւողական ճիգին, Կիրակնօրեայ վարժարաններու լայն ցանց մը ստեղծուեցաւ Սփիւռքի գաղութներէն ներս: Խոր գոհունակութեամբ կ'ուզենք հաստատել, որ ընդառաջելով Մեր թելադրութիւններուն, եւ նկատի ունենալով մեր ժողովուրդի զաւակներուն տակաւ աճող հոգեւոր սնունդի կարիքը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերէն ներս, Ազգ. Առաջնորդարաններու կառոյցներու շարքին քրիստոնէական դաստիարակութեան յատուկ բաժանմունքներ հաստատուեցան, որոնք աշխոյժ կերպով լծուած են աշխատանքի:

Քրիստոնէական դաստիարակութիւնը թէ՛ մեր Սուրբ Աթոռին կողմէ՛ համազգային մակարդակով եւ թէ՛ մեր թեմերուն կողմէ՛ թեմական սահմաններէն ներս, անհրաժեշտ է որ շարունակուի վերանորոգ թափով ու միշտ նկատի ունենալով մեզ շրջապատող պայմանները ու ներկայ աշխարհի մարտահրաւերները: Դիւրին չէ դաստիարակչական աշխատանքը. մանաւանդ դիւրին չէ քրիստոնէական դաստիարակութիւնը մեր նոր սերունդին, որ ամէ՛ն վայրկեան ու ամէ՛ն տեղ շրջապատուած է մարդուն մէջ հոգեւոր ու բարոյական արժէքները փճացնող երեւոյթներով: Այս մտահոգիչ կացութեան դիմաց մեր աշխատանքը պէտք է դառնայ աւելի՛ կազմակերպ, մեր կամքը՝ աւելի՛ զօրեղ, մեր նուիրումը՝ աւելի՛ ամբողջական: Ահա այս ակնկալութեամբ հետեւեալ գործնական թելադրութիւնները կ'ուզենք կատարել.-

ա) Մեր ընտանիքներէն ներս աւելի լուրջ կարելորութիւն պէտք է ընծայուի քրիստոնէական դաստիարակութեան: Շեշտեցինք ընտանիքի վերապահուած կեդրոնական դերը այս ուղղութեամբ: Սակայն, ինչպէ՞ս մանուկը հոգեւոր ու բարոյական առողջ կազմաւորում կրնայ ստանալ, երբ հայ ընտանիքներէն սկսած են հեռանալ մեր կրօնական արժէքները, հոգեւոր ապրումները ու եկեղեցական աւանդութիւնները. երբ խառն անուսնութիւններ ու անուսնալուծումներ սկսած են իրենց ներկայութիւնը զգալի դարձնել հայ ընտանիքներէն ներս: Հայ ծնողքը հայ մանուկին հոգեկերտումի ու հայակերտումի առաջին ու մնայուն դաստիարակն է: Հետեւաբար, հայ մանուկին քրիստոնէական կազմաւորումը անհրաժեշտօրէն կ'ենթադրէ նաեւ հայ ընտանիքի՛ն քրիստոնէական դաստիարակութիւնը:

բ) Կարելորութեամբ ընգծեցինք թէ՛ հայեցի առողջ դաստիարակութեան հիմքը քրիստոնէական դաստիարակութիւնն է: Անհրաժեշտ է հետեւաբար, որ այս խոր համոզումով քրիստոնէական դաստիարակութեան մօտենան մեր դպրոցները, ուր կրօնի ուսուցումը պէտք է դառնայ պարտադիր: Աստուածաշնչական դէպքերու ու դէմքերու կողքին, մեր եկեղեցւոյ պատմութեան դասաւանդումը, ինչպէս նաեւ մեր բարոյական արժէքներու փոխանցումը հայ աշակերտին կը նկատենք խիստ հրամայական: Այս գծով մեր Թեմակալ Առաջնորդներն ու Ազգային

Իշխանութիւնները պէտք է դառնան խստապահանջ:

գ) Բարձր գնահատելով հանդերձ մեր թեմերուն կողմէ կատարուող եռուն գործունեութիւնը քրիստոնէական դաստիարակութեան մարզէն ներս, կը սպասենք որ այդ դառնայ աւելի՛ ծրագրուած ու մեր ժողովուրդի կեանքէն ներս թափանցող: Սուրբ Գրոց սերտողութիւնները եւ հոգեւոր դասախօսութիւնները բնականաբար իրենց կարելոր դերը ունին: Անհրաժեշտ է միաժամանակ այնպիսի գործնական քայլերու դիմել, որով կարելի ըլլայ ժողովուրդի հաւաքական կեանքէն ներս մեր կրօնական արժէքները ու աւանդութիւնները կենդանի ներկայութիւն դարձնել, եւ յատկապէս նոր սերունդը ներգրաւել՝ անոր հոգեւոր կարիքներուն զոհացում տալով, հարցադրումներուն ու սպասումներուն պատասխաններ գտնելով, եւ երկխօսութեան ճամբով հայ եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան հաղորդ դարձնելով:

դ) Քրիստոնէական դաստիարակութեան մէջ յատուկ տեղ կը գրաւէ մեր եկեղեցւոյ ծեսը, որ անհրաժեշտօրէն կարիքը ունի բարեկարգութեան՝ ապահովելու համար ժողովուրդին աւելի լայն մասնակցութիւնը: Այս ծիրէն ներս յատկապէս քարոզախօսութիւնը կը նկատենք կարելոր: Քարոզին նպատակը պէտք չէ միայն Աստուածաշունչին մեկնաբանութիւնը ըլլայ, այլ՝ Քրիստոսի պատգամին փոխանցումը ժողովուրդին, ներկայ ժամանակներու մտահոգութիւններուն, հրամայականներուն ու մարտահրաւէրներուն լոյսին տակ: Այս մօտեցումով տրուած քարոզ մը ու հոգեպարար արարողութիւն մը ո՛չ միայն հոգեպէս պիտի ներշնչեն մեր հաւատացեալները, այլ նաեւ մեծապէս պիտի նպաստեն անոնց հոգեւոր աճման ու դաստիարակութեան:

ե) Կիրակնօրեայ վարժարաններու ներկայ ցանցը անհրաժեշտօրէն կարիքը ունի վերաշխուժացման: Այս մարզէն ներս աշակերտութեան թիւի նուազում եւ ընդհանուր հետաքրքրութեան պակաս մը կը նշմարենք: Կիրակնօրեայ վարժարանին դերը անփոխարինելի է, որպէս ամբողջացուցիչ ընտանիքի ու դպրոցի կողմէ ջանքուող կրօնական դաստիարակութեան: Մեր սպասումն է, որ մեր թեմերը վերակազմակերպումի ենթարկեն եկեղեցիներու ու դպրոցներու կողքին գործող Կիրակնօրեայ վարժարանները: Մեր հայրական ջերմ թելադրանքն է, որ մեր ծնողները իրենց զաւակները եւ դպրոցները իրենց աշակերտները առաջնորդեն Կիրակնօրեայ վարժարան:

*

* *

Սիրելի՛ զաւակներ հայ եկեղեցւոյ,

Հայ մարդու քրիստոնէայ կերտումը նո՛յնքան անհրաժեշտ է որքան՝ հայակերտումը, ազգակերտումը, հայրենակերտումը: Արդարեւ, ժամանակներու ժանգին ու փոշիին եթէ դիմացանք՝ պահելով մեր ազգային ինքնութիւնը ու միութիւնը, մեր դաւանած ու ապրած քրիստոնէական արժէքները ու

Ճշմարտութիւնները իրենց ճշդորոշիչ դերը ունեցան: Խորապէս կը հաւատանք, որ Բեթղէհէմի ճամբով աշխարհին յայտնուած ու Սուրբ Թադէոս ու Սուրբ Բարթողիմէոս առաքելներու ճամբով հայ կեանքէն ներս մուտք գործած, եւ մեր հայրապետներու ու սուրբերու կողմէ քարոզուած, պահպանուած ու պաշտպանուած քրիստոնէական հոգեւոր ու բարոյական արժէքները ու յաւիտեանական ճշմարտութիւններն են, որոնք դարձեալ մեզ պիտի պահեն առողջ ու զօրեղ ներկայ աշխարհի ապաքրիստոնէացընող ու ապահայացնող հոսանքներուն դիմաց:

Այս գերազանցօրէն սրբազան նպատակին է լծուած հայ եկեղեցին քրիստոնէական դաստիարակութեան ճամբով: Այս խոր գիտակցութեամբ ու նախանձախընդրութեամբ մեր Թեմակալ Առաջնորդները ու Ազգային Իշխանութիւնները, մեր ընտանիքներն ու կրթական պատասխանատուները եւ ընդհանրապէս մեր կեանքէն ներս գործող կառոյցները պէտք է մօտենան քրիստոնէական դաստիարակութեան:

Հետեւաբար, կոչ կ'ուղղենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերուն, բարձրագոյն աստիճանի կարեւորութիւն ընծայելու քրիստոնէական դաստիարակութեան՝

1) Վերակազմակերպելով քրիստոնէական դաստիարակութիւնը իր բոլոր երեսներով ու մարզերով:

2) Դպրոցներէն ներս կարեւոր տեղ տալով կրօնի ուսուցման ու բարոյախօսութեան:

3) Նիւթական անհրաժեշտ կարելիութիւնները յատկացնելով ու մարդուժ տրամադրելով քրիստոնէական դաստիարակութեան կապուած ծրագիրներուն:

4) Ժողովրդային ու երիտասարդական դասախօսութիւններու, հաւաքներու ու հրատարակութիւններու ճամբով, հայ եկեղեցւոյ տեսակետներուն հաղորդ դարձընելով մեր ժողովուրդի զաւակները՝ ներկայ ընկերութիւնը յուզող կրօնական, ընկերային ու բարոյական խնդիրներու շուրջ:

5) Թելադրելով քահանայ հայրերուն, յաճախակի ծխային այցելութիւններով հոգեւոր սնունդ մատակարարելու մեր ընտանիքներուն, տարեցներուն, հիւանդներուն ու բանտարկեալներուն:

Մեր խոր համոզումն է, որ հաւատքով ու նուիրումով կատարուած քրիստոնէական դաստիարակութիւնը մեծապէս պիտի նպաստէ մեր ժողովուրդի սիրելի զաւակներուն քրիստոնէական հաւատքի զօրացման, հոգեւոր աճման ու հոգեմտաւոր կազմաւորման:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Իր երկնային շնորհքներով զօրացնէ

քրիստոնեական դաստիարակութեան նուիրական առաքելութեան լծուած մեր
Թեմակալ Առաջնորդները, մեր հոգեւոր դասը ու ուսուցիչները, ինչպէս նաեւ այս
սրբազան նպատակի իրագործման նպաստող մեր թեմական իշխանութիւնները, մեր
բարերարներն ու կառոյցները:

Հայրական ջերմ սիրով ու օրհնութեամբ,

Աղօթարար՝
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

1 Յունուար, 2008
Անթիլիաս, Լիբանան

Visit our website at www.armenianorthodoxchurch.org